Փողոցների, մայթերի և բակերի ասֆալտապատման աշխատանքներ

Նորք-Մարաշ վարչական շրջանում 2015թ. իրականացվել են փողոցների, բակերի, մայթերի ասֆալտապատման աշխատանքներ՝ 18750 քմ մակերեսով:

Հենապատերի հիմնանորոգում

Իրականացվել են Ա. Արմենակյան փողոցի 17 տան հարակից հենապատի հիմնանորոգման աշխատանքներ՝ 41.8 քմ:

Հետիոտնային ճանապարհի հիմնանորոգում.

- Նորքի 5-րդ փողոցից դեպի Գ. Հովսեփյան փողոց իջնող հատվածի հետիոտնային ճանապարհի աստիճանների հիմնանորոգում՝ 88 գծմ,
- թիվ 121 մանկապարտեզից դեպի Հին Նորք տանող հատվածի հետիոտնային ճանապարհի հիմնանորոգում՝ 199 գծմ:

Նոր կանաչ տարածքների ստեղծում

2015 թվականին ծաղկային տարածքը կազմել է 670 քմ.

- տնկվել է շուրջ 18000 ծաղկասածիլ և 500 վարդ,
- զարնանային և աշնանային ծառատունկերին տնկվել է 300 ծառ և 300 թուփ
- աշնանը տնկվել է 3000 կակաչի սոխուկ,
- իրականացվել է շուրջ 300 ծառի սանիտարական էտ:



Ոռոգման ցանցի հիմնանորոգում.

- հիմնանորոգվել է 319.3 գծմ ոռոգման ցանց,
- փոխարինվել են խողովակներ և փականներ,
- ներկվել են խողովակներ:

Խաղահրապարակների ստեղծում.

• ստեղծվել է 2 խաղահրապարակ,

• տեղադրվել են մեկ համալիր, երեք մանկական խաղեր:

Մինի ֆուտբոլի դաշտերի տեղադրում

Շահագործման է հանձնվել մինի ֆուտբոլի մեկ դաշտ՝ հ.124 դպրոցի տարածքում:

Համագործակցություն «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Երևան Ջուր», «Երևան գազ» ՓԲԸ-ների հետ

Ջրամատակարարման համակարգի վերանորոգում

Վերանորոգվել են ջրագծի բազմաթիվ հանգույցներ, փականներ, կարգավորիչներ և խողովակներ:

Կոյուղատար համակարգի վերանորոգում

Վերանորոգվել են Նորք 9 փ. և Նորք 15 փ. կոյուղատար համակարգերի ընդհանուր 50 գծմ երկարությամբ վթարված խողովակաշարերը:

Էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի վերանորոգում

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ համագործակցության շրջանակներում նորերով է փոխարինվել թեքված և վթարային 15 հենասյուն:

Արտաքին լուսավորության ցանցի անցկացում և վերանորոգում

850 գծմ արտաքին լուսավորության նոր ցանց է անցկացվել դեպի Հին Նորք տանող փողոցում:

Թեքահարթակների կառուցում

Մասնավոր տնտեսվարող սուբյեկտների տարածքներում կառուցվել է 3 թեքահարթակ:

Այցելություն զորամասեր

Նորք-Մարաշ վարչական շրջանից իրականացվել է ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող երևանաբնակ 23 ժամկետային զինծառայողների 25 ծնողի այցելությունը զորամասեր:

Աջակցություն մահացած, հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքներին

Նորք-Մարաշ վարչական շրջանի աշխատակազմի կողմից պարբերաբար ուշադրության կենտրոնում են պահվում վարչական շրջանի մահացած, պատերազմի ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած, ինչպես նաև միաժամանակ երկու զինծառայող ունեցող ընտանիքները:

Համագործակցություն ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ

Տարաբնույթ սոցիալական ծրագրեր են իրականացվել «ՍՈՍ - մանկական գյուղեր» ՀԲՀ-ի, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի, ինչպես նաև բազմաթիվ անհատ բարեգործների և բարերարների հետ:

Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին, սոցիալապես անապահով ընտանիքների երխաներին (մանկապարտեզնե-րում, դպրոցներում).

- դպրոցահասակ 60 երեխա 20-օրյա հանգստի է մեկնել Հանքավանի «Հեքիաթների կիրճ» ճամբար,
- շուրջ 1600 սոցիալապես անապահով ընտանիքի ցուցաբերվել են տարաբնույթ օգնություններ,
- աջակցություն է ցուցաբերվել Արցախյան պատերազմի մասնակից 55 վետերանի, ՀՄՊ 14 ընտանիքի, հաշմանդամ և զոհված ազատամարտիկների 5 և սիրիահայ 6 ընտանիքի:

Սոցիալական ոլորտ

«Էրեբունի-Երևանի 2797» տոնակատարության ջրջանակում Նորք-Մարաշ վարչական շրջանի 80 ընտանիքի հատկացվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:

Կրթության ոլորտ

Անվճար հիմունքներով մանկապարտեզ հաճախող երեխաների ցուցակային թիվը

Նորք-Մարաշ վարչական շրջանում գործում է 4 մանկապարտեզ (հ.121, հ.122, հ.123, հ.124):
Հաճախող երեխաների ցուցակային թիվն է 357:

Մանկապարտեզների համար գույքի ձեռքբերում

Մանկապարտեզները նոր գույքով համալրելու ծրագրով չորս մանկապարտեզի տրամադրվել են մանկական աթոռներ, սեղաններ, մահճակալներ, սառնարաններ և այլն:

Մշակութային կենտրոններ հաճախող երեխաների ցուցակային թիվը

«Ռ. Անդրեասյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ է հաճախում 155 երեխա:

Երաժշտական դպրոցի համար գույքի ձեռքբերում

Հիմնանորոգումից հետո երաժշտական դպրոցը համալրվել է նոր գույքով:

Մշակութային միջոցառումների կազմակերպում .
Իրականացվել են հոգևոր, ազգային, պետական բոլոր տոներին, Եղեռնի 100-ամյա տարելիցին և եղեռնազարկ գրողներին նվիրված միջոցառումներ: 2015 թվականին կազմակերպվել է մշակութային 21 միջոցառում:
«Երևանյան ամառ» ծրագրի շրջանակում կազմակերպվել են մանկական ժամանցային, ուսուցողական ծրագրեր, էքսկուրսիաներ, մրցույթներ:

Եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված խաչքարի բացում

Հիմնանորոգվել է «Նորք-Մարաշի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ը:
Մարզադպրոց է հաճախում շուրջ 270 երեխա՝ 6 մարզաձևերում:

Մարզական միջոցառումների կազմակերպում
Նորք-Մարաշ վարչական շրջանը պարբերաբար կազմակերպում է մարզական բաց առաջնություններ, ներհամայնքային մրցումներ, ընկերական հանդիպումներ, ինչպես նաև մասնակցում է դպրոցականների մարզական խաղերին, բակային առաջնություններին և այլ մրցաշարերի:

Առողջապահության ոլորտ

Պետպատվերի շրջանակում բուժօգնության ցուցաբերում

Պետպատվերի շրջանակում վարչական շրջանի 20 բնակչի տրամադրվել են անվճար բուժօգնության միջնորդագրեր:

Ակցիաների շրջանակում անվճար բուժզննման իրականացում

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի նախաձեռնած Ձեզ համար կանայք խորագրով միամսյակի և Երևանյան ամառ ակցիայի շրջանակում անվճար բժշկական հետազոտություն է կազմակերպվել հ. 5 պոլիկլինիկայում:

Արտաքին կապեր

Այցեր, համագործակցություն, ձեռքբերումներ

- Երևանի և Ստեփանակերտի քաղաքապետարանների միջև կնքված համագործակցության ծրագրերի շրջանակներում, փորձի փոխանակման նպատակով, վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցիչները երկկողմ հանդիպումներ են ունեցել Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի հետ, իրականացվել են սոցիալական բնույթի ծրագրեր:
- ՀՀ սահմանամերձ շրջանների հետ համագործակցության ծրագրերի շրջանակներում Նորք-Մարաշ վարչական շրջանի աշխատակազմն այցելել է Տավուշի մարզի Տավուշ գյուղական համայնք, իրականացվել են սոցիալական բնույթի ծրագրեր:

Պաշտոնատար անձանց ընդունում, համագործակցություն

- «Էրեբունի - Երևան 2797» տոնակատարության շրջանակներում ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի պաշտոնական պատվիրակությունը հյուրընկալվեց Նորք - Մարաշ վարչական շրջանում:

Երկկողմ հանդիպումների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցության ծրագրերն ընդլայնելու մասին: